


ըսելը — այս յուրովի դործունէութիւնը պէտք եղածին չափ չէ գնահատուած: Մեծ Աղգապի յայտնի արժանիքներէն մին այն է, որ մեր նախնիքներու կեանքէն մնացած բարքերը՝ հայ ուսման ծոցէն հաւաքած ու արձանագրած է անկորստական կերպով: Մենք կը արտնջենք, երբ կը տեսնենք որ մեր հին պատմագիրներն անհող եղած են մեզի մեր հայրերուն վաղնջական բարքերն հաղորդելու: Ու երբ Ե. Լալայեան մեր առջեւ կը դնէ «Ազգագրական Հանդէս»ի 26 հատորներուն շարանը, մեզմէ շատերը եւ ո՛չ իսկ կ'անդադրանան, որ անոնց մէջ մեր նախապատմութեան եւ հին բարքերու բեկորները ծրարուած են: Այն աստիճանի մեծ է Լալայեանի արդիւնքը, որ կը տարակուսիմ՝ թէ արդեօք զինքը փոխարինող մը պիտի ունենանք երբեք:

Ս. Սամուէլեանի¹² հետ ես ալ կը խորհրդածեմ. «Այսօր Երուանդ Լալայեան մեզի թողած է, լոկ իր անհատական ջանքերով, իր միանձնեայ գործունէութեամբ կատարուած աշխատանքներու անազին ժառանգութիւն մը, որ պատիւ պիտի բերէր զիտական ո եւ է կազմակերպութեան կամ հաստատութեան, եթէ այդ կատարուէր վերջինիս նոյն իսկ հաւաքական ուժերով»:

Լալայեան յիշուած գործերէն զատ մեզի ձգած է ազգագրական նիւթերու հսկայ պաշար մը, որ զեռ չէ հրատարարուած: Հայաստանի Պորհրդային կառավարութիւնը գովելի եռանդ մը ցոյց կու տայ, Լալայեանի վերջին գործը՝ «Պեղումները Հայաստանում»՝ հրատարակ հանելու: Անհամբերութեամբ կը սպասենք անոր լոյս տեսնելուն եւ կը յուսանք թէ Հայաստանի Պորհրդային կառավարութիւնը պիտի գիտնայ մեծ Լալայեանի արժէքը գնահատել՝ հրատարակելով ո՛չ միայն անոր անտիպ նիւթերն, այլ նոյն իսկ ազգագրական ուսումնասիրութիւններու մասնաւոր զարկ մը տալով:

Հ. Ա. ՔԱՐԱՄԱՆԵԱՆ



3. Վասպուրականի հայերի եւ միւս ազգերի ազգագրութիւնը:
 4. Ամբողջ Վասպուրականի ժողովրդական հաւատքը:
 5. Վասպուրականի հայ ձեռագիրների ցուցակը:
 6. Վասպուրականի հայ բանաւոր գրականութիւնը:
¹² Խորհրդային Հայաստան, անդ:

Ա. Յ. ՄԱԿԱՐԵԱՆ, Յուշագրք Թրակիոյ եւ Մակեդոնիոյ հայ գաղութներու: Սեւանիկ, տպ. Հորհրդ, 1929, 8⁰, էջ 640: Գրեն՝ 100 տրամբի:

Ինչ որ գրի կ'առնենք այսօր ընթացիկ հայ կեանքի էջերէն, պիտի ըլլայ վաղն ատաղձ հայ կեանքի պատմութեան համար: Այս տեսակէտով հարուստ շտեմարան մը նիւթերու կը մատակարարէ Ա. Մակարեան իւր Յուշագրքին մէջ Թրակիոյ եւ Մակեդոնիոյ հաստատուած հայ գաղութներու արդի պատմութեան համար:

Ներածաբար կը դժուր հոն հայ գաղթականութեան սկզբնաւորութիւնը, որ կը շօշափէ արդէն հայ Արգիւն նախապատմական շրջանը, երբ (ըստ Հերոդոտի) հայը թրակեան ճանապարհով կը յառաջանար դէպի իւր այժմեան աշխարհը (հմմտ. էջ 9—15. այս մասին ընդարձակ Հ. Յ. Տաշեան՝ Ուսումն հայերէն դասական լեզուի, էջ 123—159): Յատկապէս 572ին կը նշանակուի հայկական վերադարձը իւր հին ճանապարհին վրայ. այս թուին տեղի ունեցաւ հայկական մեծ ապստամբութիւնը Պարսիկներու դէմ երբ բազմաթիւ հայեր զիմեցին Կ. Պոլիս եւ անկէ, անշուշտ, տարածուեցան Թրակիոյ եւ Մակեդոնիոյ. բայց այս կողմերու հայ գաղութի պատմական սկզբնաւորութիւնը պէտք է դնել առաւելապէս 2.—է. դարերու անցման շրջանին, երբ Մաւրիկ Կայսր քաղաքական նպատակներով նստեցուց հոն հայկական բանակներ. որոնք սպա կազմեցին գաղթավայրեր: Նաեւ յաջորդ դարերու մէջ նոյն քաղաքականութեան հետեւեցան կայսրները: Աւելորդ է սակայն ծանրանալ այս պատմական անցեալին վրայ: Հայը երբ զոտ ինքզինքը ճնշուած իւր հայրենիքի մէջ փնտոց սպաստան քրիստոնէայ աշխարհներու մէջ. ամէնէն յառաջ զբացի քրիստոնէայ պետութիւնը՝ բիւզանդական աշխարհն էր, որ կը ձգէր զինքը. այսպէս հին եւ միջին, նաեւ նոր դարերուն: Ծատերը եկան միացան հին գաղութին. թէպէտ հօրադոյն ազգերու հետ ձուլումը անխուսափելի էր յընթացս դարերու, բայց նոր եկուորները կը փոխանակէին հիները. եւ ամբողջ Թրակիոյ-Մակեդոնիոյ գծի վրայ երեւցան միշտ հայեր, երբեմն առաւել եւ երբեմն նուազ թուով: Վերջին ժամանակի աղէտը թափեց հոն նոր զանգուածներ հայ գաղթականներու:

Մակարեանի աշխատութիւնը ոչ միայն

կ'ամփոփէ ահնարիկ մը անցեալին վրայ (կը յիշեմ՝ Գլ. Գ. «Թրակիոյ եւ Մակեդոնիոյ հայ գաղութներու կազմութիւնը», էջ 18—28, ԻԳ. «Բիւզանդական հայ կայսրեր եւ անոնց դերը», էջ 549—626 եւ Գ. «Թեոսաղոնիկէ դարերու ընթացքին», էջ 29—83), այլ — ինչ որ ուրախալի է — կու տայ մանրապատմ նկարագրութիւն մը հայ գաղթականութեան արդի վիճակի վրայ, մասնաւորապէս վեր հանելով Գաղութին տնտեսական-քաղաքակրթական կացութիւնը: Գաղութային կազմակերպութիւնները եւ անհատականներու յարատեւ ճիւղերը կը գործեն ձեռնի ձեռն պահպանելու հայ ոգին, բարեգեղութեանը եւ խթանելու հայ միտքը միշտ դէպի բարին, դէպի յառաջադիմութիւն:

Ամէն գովութեան արժանի կը գտնեմ Մակարեանի ջանասիրութիւնը. որ հաւաքած է ի մի խնամով ցիր ու ցան տեղեկութիւնները, դասաւորած է զանոնք եւ ընծայած մէկ ամբողջութիւն, ուր կը ցոլանայ կարեւոր հայ գաղթականութեան մը անցեալի եւ ներկայի կեանքը, յաճախ նաեւ նկարներով: Անշուշտ պահանջած է աշխատութիւնս քրտինք. բայց եւ ապահոված է իրեն մեր երախտագիտութիւնը: Ծնորհակալութիւն նաեւ Պր. Վարդան Պարծանքեանի, որ աջակցած է զիւրացնելու գործին տպագրութիւնը:

Հ. Ն. ԱՊՆՆԵԱՆ

FRANZ CUMONT, Die orientalischen Religionen im römischen Heidentum. Nach der vierten französischen Auflage unter Zugrundelegung der Übersetzung Gehrichs bearbeitet von Dr. August Burckhardt-Brandenburg. Dritte Auflage, mit 8 Doppeltafeln. Verlag und Druck von B. G. Teubner, Leipzig und Berlin, 1931, 8⁰, էջ XVI + 334, Գրեն՝ Rm. 14.

Յ. Կիւմոն ծանօթ է արդէն «Հանդէս Ամսօրեայ»ի ընթերցողներուն¹:

«Les religions orientales dans le paganisme romain» գրութիւնը մեծանուն կրօնագէտին նշանաւոր գործերէն մին է, որ ամփոփումն է՝ 1905ին Պարիս եւ Օքսֆորդ իր տուած դասախօսութիւններուն: Գործը գաղ-

¹ Տաշեան Հ. Յ. Վ., Պոնտական ուսումնասիրութիւնք. Մասն Բ. Ուղեւորութիւն հնախոսական հետեւ. Կիւմոն Եղբարց. Վրենա, 1919:

ղիւրէն լեզուով արդէն չորս հրատարակութիւն տեսած է:

Առջեւ ունիմ անոր գերմաներէն թարգմանութիւնը՝ երրորդ տպագրութեամբ: Գերմաներէն այս նոր տպագրութիւնը նախորդներուն վրայ այն առաւելութիւնն ունի, որ ո՛չ միայն գաղղիերէն վերջին (1929) ճոխ հրատարակութեան վրայէն կատարուած է, այլ նաեւ կը բովանդակէ հեղինակին ձեռք բերած նորագոյն ծանօթութիւնները, զորոնք թարգմանչին տրամադրած է:

Կրօնական ա՛յն շարժումը, որ արեւելքէն ծայր առած՝ զիմեց հռոմէական կայսրութեան մայրաքաղաքը զլիւսաւոր նիւթն է աշխատութեանս: «Այս կրօնական շարժումը, կ'ըսէ Կիւմոն, կ'ուղենք ստուերագծել իր բազմազան ու լայնածաւալ ազդեցութիւնները թափանցելու հետագոյնը, որոնք հետզհետէ Փոքր Ասիայէն, Եգիպտոսէն, Ասորիքէն ու Պարսկաստանէն անուեցան ու տարածուեցան, ու պիտի ջանանք անոնց յատուկ նկարագրական դժերը տալ ու նշանատուկ նկարագրական դժերը: Վերջապէս պիտի կուտիւնը վեր հանել: Վերջապէս պիտի տեսնենք, թէ ի՛նչպէս անոնք կերպարանատեսիլները, թէ ի՛նչպէս անոնք կ'ընդունուին իր ըրին հին կրօնապաշտութիւնը եւ ի՛նչ ձեւ իր ըրին այս կրօնապաշտութիւնը ա՛յն ատեն, երբ վճռական պայքարի մը մէջ կը գտնուէր քրիստոնէութեան հետ, որուն երեւան գալն քրիստոնէութեան հետ յարակից խորհուրդաւորան (Mysterium), թէ եւ այս խորհուրդներուն անհաշտ թշնամութեան մը մէջ էին քրիստոնէութեան հետ» (էջ 9—10):

Բովանդակութիւնը հետեւեալ կէտերու մէջ կարելի է խոսեցել. Արեւելք եւ Հռոմ (էջ 1—18), ուր նկատի կ'առնուին ընդհանուր ահնարիով արեւելեան եւ արեւմտեան յարաբերութիւններն եւ Աղբիւրները: Արեւելք ատաղջին դարերուն՝ գերազանց զիւր մը բռնած էր քաղաքակրթական ու կրօնական ասպարէզներուն վրայ: Ասկէ կը ծագէ հարցը թէ «Ինչո՞ւ տարածուեցան արեւելեան պաշտամունքները» (էջ 18—43): Որովհետեւ քաղաքակրթական ու տնտեսական ազդակներուն կը միանար նաեւ ա՛յն պարագան, որ արեւելեան կրօններն զգայարաններու եւ զգածումներու կը խօսէին: Այս առթիւ Կիւմոն կը ծանրանայ կրօնական զիտութեան,

փրկաստիճանական, հոռոմէական կրօնքի թե-
րութիւններուն, հողոյ սրբացման, անմա-
հոռութեան յոյսի վրայ են: Փոքր Ասիա (էջ 43—
68) մեծ ազդեցութիւն ունեցաւ Հոռոմի վրայ,
մասնաւորապէս Կիւրեղի պաշտօնով եւ յա-
րակից երեւոյթներով: Անմասն չմնաց նաեւ
Եգիպտոս (էջ 68—94), որուն կրօնքին ներ-
կայացուցիչները եղան Հոռոմի մէջ՝ Իսիս եւ
Սերապիս—Ոսիրիս: Ասորիքի նուիրուած
գլխուն մէջ (էջ 94—124) հեղինակը կ'ու-
սումնասիրէ Ատարկատիս գիցուհին, Ագո-
նիս, Բակաղ Դամասիկեան, Երկինքը՝ իբր
հոգիներու օթեան են: Նոր աշխարհ մը կը
պարունակէ Պարսկաստան (էջ 124—148):
Կիւմոն կը լուսարանէ ժամանակին իրանեան
եւ յոյն-հոռոմէական քաղաքակրթական վի-
ճակը, Աքեմենեան ծիսակատարութիւններն
ու Մազդէականութիւնը (արեւմուտքի մէջ):
Հոռոմէական նուաճումներու շնորհիւ՝ սասա-
նեան ազդեցութիւնը կը թափանցէ հոռոմէա-
կան դաւաճներու մէջ: Այդ ազդեցութիւննե-
րէն ամէնէն մեծը Միհրապաշտութեան յա-
ռաջ բերածն է: Լատին աշխարհը կ'ընդունի
Միհրի պաշտօնը: Կիւմոն կը բնորոշէ հոս
նաեւ Միհրապաշտութեան յատկանշա-
կանը. կը խօսի երկուորականութեան, եր-
կարմատեան բարոյականի եւ վերջինքի (Es-
chatologie) մասին: Այս զանազան կրօններու
մէջ կարեւոր տեղ կը զբաւէ Աստեղահմայու-
թիւնն ու Մոզուրիւնը (էջ 148—178): Յետոյ
հեղինակը վեր կը հանէ ա'յն Կրօնական Կեր-
պարանափոխութիւնը (էջ 178—192), որուն
ենթարկուեցաւ հոռոմէական հեթանոսու-
թիւնը՝ յիշուած կրօններուն ազդեցութեան
տակ: Յաւելուածին մէջ (էջ 192—204) Կիւմոն
Բակքոսեան խորհուրդներու վրայ կը ճառէ:
Ծանօթութիւններու բաժինը (էջ 205—313),
ղետեղուած դործին վերջը, կարեւոր մէկ
մասն է աշխատութեանս, միանգամայն վկան
հեղինակին ծովածաւալ գիտութեան եւ խո-
ղարկու որդւոյն: Ուսանելի շատ բան կայ հոն:

Մնամով կազմուած նիւթերու ցանկը (էջ
324—334) եւ արժէքաւոր նկարներու ութը
տախտակները, կ'իմացնեն մեզի թէ աւար-
տած են Կիւմոնի դասախօսութիւնները:

Այսպէս թէպէտ Կիւմոնի աշխատու-
թիւնը այս ուրուագծի մէջ աւելի անոնց հա-
մար շահագրգռական պիտի երեւայ, որոնք
կրօններու պատմութեամբ կը զբաղին. բայց
նաեւ հայ հին ըմբռնումներու, հեթանոսա-

կան հաւատքի ուսումնասիրութեան պիտի
մատուցանէ օգտակար ծառայութիւն: Ոչ
միայն թարգմանական գրականութեամբ պա-
տուաստուած են հայ մտքին օտար ըմբռ-
նումներ, այլ եւ հելլէն, ասորի, պարսիկ եւ
ուրիշ արեւելեան ժողովուրդներուն գրա-
ցիութեամբ ստացած է հայը տարրներ,
որոնք եկամուտ են: Նկատի առնելու է Աքե-
մենեան, պարթեական, նաեւ սասանեան
չրջանները. Տիգրան Մեծի օրով Հայկական
սահմաններու ընդարձակուիլը, Հոռոմէա-
կան պետութեան տակ նուաճուիլը են: Ան-
տարակոյս է որ հայ արքունիքը ենթարկուե-
ցաւ այս շրջաններուն օտար ազդեցութիւն-
ներու. արեւելեան կրօններէն եկան տարր-
ներ եւ ձուլուեցան հեթանոս Հայաստանի
մեհեաններուն մէջ հայկական հաւատքին
հետ. ճիշդ այնպէս, ինչպէս յետոյ քրիստո-
նէութեամբ հելլենական եւ ասորական մտքեր
ներմուծուեցան երկիրը: Զանազանելու հա-
մար բնիկն եւ եկամուտը, հարկ է ճանչնալ
վերահասու ըլլալ դրացիներու հաւատա-
լիքներուն, համաշխարհական համարուած
խորհուրդներուն: Կիւմոնի աշխատութիւնը
պիտի նպաստէ այս հասկացողութեան:

Հոռոմէական հեթանոսութիւնն իր հաւա-
տալիքներն ու դիցարանութիւնը ճոխացուց
փոքրասիական, ասորի, եգիպտական եւ
պարսիկ տարրներով: Այդ կրօններուն մէջէն
Հոռոմ առաջին անգամ փոխակական մեծ դի-
ցուհւոյն պաշտօնն ընդունեցաւ (էջ 43): Սոյն
պաշտօնը թէեւ բարբարոսական բարքերով լի
էր, սակայն համակիրներու ստուար բազմու-
թիւն մը ունէր շրջակայ երկիրներու մէջ:
Մինչեւ այսօր Փոքր Ասիայի մէջ այդ հին
պաշտօնին մնացորդները պահպանուած են,
որոնց մէջ աչքի կը զարնեն Գրզըլ Պաշները:
Բաղմաթիւ փաստերով կարելի է ցոյց տալ,
որ հեթանոս Հայաստանն ալ ունէր կրօնա-
կան նման պաշտամուծներ. հայ Անահիտին
վրայ ալ կը նշմարուին նման կոչոյ յատկու-
թիւններ եւ մեր Արա Գեղեցիկն ու Շամի-
րամ իրենց փոքրասիական ամոններուն շար-
քին կը վերաբերին: Ինչպէս որ Փոխակական
Դիցուհւոյն պաշտօնը Հոռոմի ոստիկանու-
թեան հսկման տակ էր եւ սակայն դարձա-
նալի կերպով ուռճացաւ (էջ 50), այսպէս
նաեւ Հայաստանի մէջ Աստղիկ-Արայ-Շա-
միրամ թէեւ հալածուեցան, բայց մինչեւ
այսօր՝ ժողովուրդն անոնց վրայ կը պատմէ:

Պարսկական Միհրապաշտութիւնը նման
հսկայ երեւոյթ մըն է հոռոմէական մեհեանին
մէջ: Հոռոմէացիները Միհրապատի զէմ կոուե-
լու ատեն արդէն մօտէն շփման մէջ մտած
էին մազդէական ժողովուրդներու հետ. եւ
այս յարաբերութիւններն աւելի սերտացան՝
երբ Փլաւիանները Փոքր Ասիան պողոտանե-
րու ցանցով մը ծածկեցին եւ հոռոմէական
բանակները վերին Եփրատի ափերուն ու հայ
բարձրագաւառի վրայ բանակեցան (էջ 128):
Պոնտոս, Կապադովիլիա, Հայաստան ու Կո-
մագենէ Միհրապաշտութեան կենդրոններ
էին եւ Միհրապատ անունով արքաներու յա-
ջորդութիւն մը հասցուեցան են: Մինչեւ
այսօր հայը սիրով կը գործածէ Միհրան ա-
նունը: Հին Հայաստանի Միհրապաշտու-
թեան կենդրոններն էին (Աւդալբեկեան, Միհրը
Հայոց մէջ, էջ 45) Բարձր Հայք,
Վասպուրական, Տարօն—Սասուն, Սիւնիք
են: Իսկ գրականութեան մէջ գործածուած
են Միհր անունն բաղմաթիւ ձևեր (անդ,
էջ 10): Մհեր անունը մեր ժողովրդական
գիւլեգաներգութեան հերոսին յորձորջանքն
է արդէն:

Թէպէտ եւ Միհրապաշտութիւնը քրիս-
տոնէութեան տեղի տուաւ Հոռոմի մէջ, սա-
կայն եւ այնպէս Պարսկաստան զեռ չվճատե-
ցաւ: «Մանիքէականութիւնը Միհրապաշ-
տութեան յաջորդեց, կը յարէ Կիւմոն, որուն
գլխաւոր վարդապետութիւնները ժառանգած
էր. եւ պարսկական երկուորականութիւնը
հայ Պաղիկեաններու եւ Կաթարոսներու
(Katharer) միջնորդութեամբ տարածուեցաւ
ու Միջին Դարուն արիւնահեղ պատերազմ-
ներու պատճառ եղաւ՝ Եփրատէն մինչեւ
Ատլանտեան Ովկիանոս» (էջ 130):

Երբ խորամուխ ըլլանք Կիւմոնի այս
հմտալից գրութեան մէջ, ո'չ միայն պիտի
հիանանք հեղինակին հանճարին վրայ, այլ
եւ պիտի համոզուինք, որ այս գրութիւնը
նաեւ հայ հեթանոսական կրօնին պատմու-
թեան համար անհրաժեշտ ազդրու մըն է:
Թէեւ մասնաւոր գրուի մը չէ նուիրուած հոն
հայ կրօնին, բայց նկատուած են դրացի եր-
կիրներու հոսանքները: Եւ Հայաստան ոչ
միայն իր աշխարհագրական դիրքով կենդրո-
նական տեղ կը զբաւէր Հոռոմի եւ Արեւելքի
միջեւ, այլ եւ յիշուած ժամանակաշրջանին
եռ ու զեռ կեանքը Իտալիայէն մինչեւ Պարս-
կաստան, ինքնաբերաբար Հայաստանի վրայէն

կ'ընէր իւր ճանապարհը: Եւ ահա նաեւ այս
տեսակէտով կարեւորութիւն կը ստանայ
Կիւմոնի գործը: Հոն պիտի գտնէ պատմա-
գիրն ու կրօնախօսը շատ մը կրօնական
ըմբռնումներու բացատրութիւնը, վասն զի
Կիւմոն իր մեծ հեղինակութեամբը նորանոր
հեթանոսները պիտի բանայ խուզարկուին
աչքերուն առջեւ:

Երբ Կիւմոն կը խօսի Ա.—Գ. դարերուն
արեւելեան կրօններու զէպ ի Հոռոմ հոսան-
քին մասին, այս երեւոյթին համընթաց կը
գտնէ (էջ 67) գիտութիւններու զարգացում՝
փոքր ասիացիներու, ասորիներու եւ եթով-
պացիներու քով: «Տաւրոսի հիւսիսային
կողմը, կը շարունակէ Կիւմոն, հայերը նոյն
խիղճանք կը թափեն՝ իրենց բարբարոսական
լիզուն՝ գրական բարբառի մը վերածելու եւ
պէտք եղածին պէս յղկելու» են: Թէ ինչ-
պէս Կիւմոն յիշուած ընդհանուր զարգա-
ցումներուն համընթաց կը նկատէ նաեւ հայ
լիզուն գրական զարգացումը, ինծի անբա-
րոնելի կ'երեւայ: Վասն զի ա'յն շրջանին,
երբ հեթանոս Հոռոմի հետ՝ արեւելեան կրօն-
ները կ'անհետանային (Գ. դարուն), Հայաս-
տան յոյն եւ ասորի լիզուններէն կ'օգտուէր
գրաւորին համար: Իսկ գրական լիզունի կի-
րաւորութիւնը հինգերորդ դարուն կը սկսի
առաջին անգամ:

Բաղձալի պիտի ըլլար նիւթերու ցանկն
աւելի ճոխ տեսնել, որ պիտի դիւրացնէր
մատենին օգտագործումը: Այսպէս զանց
առնուած է հոն մասնանշել այն տեղիքները,
որ Հայաստան թէպէտ հարեւանցիօրէն,
բայց նկատողութեան առնուած է (հմտա-
էջ 6, 125, 128, 132, 282 են):

Ասոնք հարեւանցի գիտողութիւններ են
միայն: Կը խոստովանիմ թէ շատ բան սոր-
ված կը բաժանուիմ Ձ. Կիւմոնի դասախօ-
սութիւններէն:

Հ. Ա. ԳԱՐՍՄԱՆԵԱՆ



**ԾՐԱՔՓՈՒՆՔ ԺՆՄԱՆԵՎԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ**

* Caucasia. Կովկասագիտական Ուսում-
նաքերք: — Caucasia մին է այն պար-
բերագիրներէն, որոնք որոշ սահման մ'ու-
նին իրենց հետազօտութիւններու համար: